րութեան Հին Նախիջեւանի, պատուիրելով նշանակել զայլ քահանայս ի նմին պաշտաման. Թ. 767։

— Ցանուն Ներսէս քահանայի Վահանեան Կարին քաղաքի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Առաջն. Տեղապահի տեղւոյն. Թ. 771։

— Ցանուն Առաջն. Տեղապահին Կարնոյ Տ. Զաւէն Ծ. վարդապետի, ի խրախոյս նմա և քաջալերութիւն ի նորոգ պաշտաման իւրում. Թ. 774։

— Ցանուն ս. Սինոդի, որով պատուիրի յատկացուցանել ի տոկոսեաց կտակի հանգուցեալ Մեղուբինեանի 600 րուբլի ի տարին փոխ բարձր. ուսման Կոստանդին սարկաւագի, և 400 րուբլի առ մի ամ ի նոյն նպատակ Տ. Արսէն վարդապետի Ղլըճեան. Թ. 784 և 785։

— Ցանուն Տ. Մաղաքիայ Ցովսէփ և Սահակ եպիսկոպոսաց, որպէս վկայական եպիսկոպոսական և յուշարար փոխմական պարտեաց նոցին. Թ. Թ. 787, 792, 798։

— Ցանուն նոցին Նորապսակ եպիսկոպոսաց, փոխ շնորհելոյ նոցա պանակէ. Թ. Թ. 788, 793, 7.9։

— Ընդհանրական յանուն ժողովրդեան Արևել. Պարսկաստանի և Հնդկաստանի, որով յայտ արարաւ կարգումն Գեր. Մաղաքիա եպիսկոպոսի յառաջնորդ նոցա. Թ. 789։

— Ընդհանրական յանուն ժողովրդեան Ատրպատականի, որով յայտ արարաւ կարգումն Գեր. Սահակ եպիսկոպոսի յառաջնորդ նոցա. Թ. 800։

Ցանուն Գեր. Տ. Արիստակէս եպիսկոպոսի Դաւթեան, որով շնորհեցաւ նմա պատիւ արքեպիսկոպոսութեան. Թ. 801։

— Ընդհանրական յանուն Հայ ժողովրդեան Ամերիկայի, որով յայտ արարաւ նոցա կարգումն Գեր. Ցովսէփ եպիսկոպոսի յառաջնորդ նոցա. Թ. 812։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Պ. Բաղդասարեայ Ցակոբեան, փոխ նուիրելոյ նորա մի հազար րուբլի ի պէտս նորոգութեան վանացն ս. Հռիփսիմեայ. Թ. 842։

— Ցանուն քարտուղարի Վեհ. Հայրապետի Տ. Կորիւն վարդապետի, որով կարգեցաւ նա գլխաւորապետ Հայրապետական Դիւանի. Թ. 844։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

12 յունիսի.—Մայր Աթոռի միաբան Տ. Թովմա վարդապետ Բաղդասարեանը կարգւում է վանահայր Սաղիանու ս. Սանահինու վանքի։

— Սինոդը ընդունում է երգուեալ հաւատարմատար դոկտոր Վիլհելմ Օբերմայերին, որ կայսերական և դատական փաստաբան է Աւստրիոյ Վիեննա մայրաքաղաքում, ձեռք բերելու նոյն քաղաքում վախճանած Կոստանդին Վարշամեանցի կտակած գումարը յօգուտ Գէորգեան Ճեմարանի։

— Սինոդը յարգելով Նոր Բայազէտի գործակալ Մատթէոս վարդապետի խնդիրը՝ աւելացնում է նորա տարեկան 400 րուբլի ռոճկի վերայ այլ ևս 200 ռ.։

19 յունիս. Սինոդը մատուցանելով առ Տ. Նախարարն ներքին գործոց՝ Ստաւրապոլ քաղաքի (Կովկասում) հայոց աղքատանոցի ծրագիրը, խնդրում է հաստատել այն ի գործադրութիւն։

24 յունիս. Հին Նախիջևանի փոխանորդ Տ. Կիւրեղ վարդապետի զեկուցման համաձայն Սինոդը կարգում է Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանին առ տեղւոյն քննելու Հոգևոր կառավարութեան անդամոց զեղծումները, նախապէս հեռացնելով նրանց պաշտօնից՝ ըստ սրբ. կանոնի Վեհափառ Հայրապետի։

26 յունիս. Սինոդը թոյլ է տալիս Խոստանեան գիւղի բնակչուհի Դիլբար Բարսեղեանին մտանել ի նոր ամուսնութիւն՝ նորա այր Նուբիջան Սողոմոնեանի անընդունակութեան պատճառաւ, որ ապացուցուած է բժշկական հետազօտութեամբ։

1 յուլիս. Ըստ խնդրոյ հրէայ Իւսուբ Արգուլեայ օղլւոյ միջնորդում է Տէր Կառավարչապետին Կովկասու, թոյլ տալ ընդունել նրան Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ ծոցը։

— Սինոդը խնդրում է ընդ ձեռն

Տ. Կառավարչապետին Բարձրագոյն թոյլտուութիւն եղել Սարգիս Քամալեանցին՝ Գերմանիա գնալու և ուսումն շարունակելու համար:

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ.

«Լուարուք, զի ասացաւ՝ մի՛ շնար. բայց ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում»:

Մատթ. Ե. 27. 28:

ԱՉՔԻՍ առաջ կենդանի է դեռ իմ ուսուցչի (ներկայումս Հաշտ ուեննեց մի բարձրաստիճան եկեղեցականի) կերպարանքը սրբազան պատմութեան դասին, երբ նա այս պատուիրանին հասնելով՝ լռութեամբ անցաւ և յաջորդին շարունակեց: Այն ժամանակ ես իմ պատանեկական ըմբռնմամբ գոհ մնացի, որչափ յիշում եմ, այդ վարմունքից, և այժմ երբ մտածում եմ՝ դատապարտել կրկին չեմ կարող: Յիրաւի ոչ միայն երեխաների, այլ նաև հասակաւոր մարդոց առաջ այս նուրբ խնդիրը շօշափելը խիստ պատասխանատու գործ է, և ով խորին լըրջութեամբ և ահուդողով չի խօսում այս մասին, աւետարանական գաղափարի ահա որ ճշմարտութեամբ չի զգածուած և սիրտը լի չէ նորա պահանջած սրբութեամբ՝ աւելի գայթակղութիւն պատճառել քան բարերար ազդեցութիւն գործել կարող է: Արդէն ամօթի բնածին զգացումը մեզ ասում է, որ լռելն ու ծածկելն այստեղ անհրաժեշտ միջոց է յաճախ վտանգի առաջն առնելու համար: Եթէ կարելի լինէր մանաւանդ մանուկների կրթութիւնն այնպէս տանել, որ նոքա ժամանակից առաջ ամենևին չծանօթանան զգայական ցանկութիւնների դէպի ապականութեան անդունդը ձգող գաղտնիքների հետ՝ անչափ մեծ ծառայութիւն մատուցուած կլինէր մարդկութեան: Սակայն դժբաղդաբար մեր ընտանեկան և հասարակական կեանքն այնպէս է կազմակերպուած, մեզ շրջապատող աշխարհն այնքան բազմակողմանի միջոցներ ունի յիշեալ գաղտնիքները բանալու, որ մենք վաղ թէ ուշ ստիպուած պէտք է լինինք հաշիւ տեսնել նոցա հետ. ծածկելն ու լռելն ուրեմն խորհուրդ չէր ունենայ կրկին. պէտք է խօսենք, պէտք է մտածենք ու քննենք, թէ ս. աւետարանն ինչ ոյժ, ինչ զէնքեր է տալիս մեր ձեռքը՝ անարատին պաշտպանելու և անկեալին կրկին ոտքի կանգնեցնելու համար:—Մի հարևանցի ակնարկ այն մեծամեծ փոփոխութիւնների վերայ, որոնք վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում յառաջ են եկել հայկական ընտանիքի մաքուր կենցաղի՝ բարձր ու ստորին շրջանների ամէն տեսակ մարդոց բարոյական հայեցողութեան մէջ, մի ակնարկ այն մոլի կենցաղի վերայ, որ աշխարհ եկած երիտասարդութիւնն է վարում, այն բոլոր փորձութիւնների վերայ, որոնց ենթակայ են փողոցներում թափառող մանուկները՝ բաւական է մեզ համոզելու, որ այստեղ շատ նիւթ կայ յիրաւի լուրջ խորհրդածութիւնների համար և Աստուածային պատուիրանը ոչ միայն զանց առնել պէտք չէ, այլ անհրաժեշտ է ընդհակառակն միշտ աչքի առաջ ունենալ, միշտ կրկնել և արծարծել:

Արդ, ինչպիսի՞ պահանջներ է դնում մեր առաջ Աստուծոյ պատուիրանը: «Մի՛ շնար»... շատ ընդհանուր դարձուած է այդ և կարող է զանազան բացատրութիւններ վերցնել: Հրէից օրէնքը բացատրում է այնպէս, որ արգելուած է լինում միայն ուրիշի ընտանեկան սրբութիւնն արատաւորելը. այր և կին Աստուծոյ օրէնքի համաձայն ամուսնական սուրբ կապով միացած են իրար հետ. քակել այդ կապը ամուսնացած կնոջ անհաւատարիմ դառնալով՝ ընտանեկան բարոյական կեանքի կապը քակել և ուղղակի Աստուծոյ օրէնքի դէմ մեղանչել է, ուստի և տեղի պէտք է չունենայ: Սակայն յայտնի է, որ արտաքին գործողութիւններ արգելելով կարելի չէ բա-